

վարէ: Ժամանակակից քաղաքակիրթ ու բարգաւաճ ազգերու հետ սերտ յարնչութեան մէջ, եւ ոմանք անոնց քով իսկ սնած, կամ բնակած տարիներով ի Բիւզանդիոն, կեսարիա կամ Անտիոք, անոնց կենցաղավարութեան բոլոր նրբութիւնքն ու զեղեսութիւնքը իւրացուցած են իրենց պալատանց, կահուց, հանդերձից ու մարմնոյ ուրիշ խնամոց մէջ, եւ մանաւանդ ստամոքսի սպասարկութեան. բայց ոչ անոնց քաղաքական ու բարոյական առաքինութիւնքը:

Մարդս անգործ չի կրնար մնալ. կամ պիտի աշխատի, կամ զուարճանայ: Մեր ազատանին, «մարդիկ փափոշի իբրեւ զնոսա, ընդարձակասուն բնակիչք ձիւնեղէն լերանց» (Եղիշ. 167), ընտրած էին երկրորդը: Հոովմայեցւոյն տրուած էր՝ երթալ նուաճել ազգեր, դառնալ թուրք կախել պատէն, ու բահը ձեռք առնուլ, անմահացնելով իսկ զայն Մշակակականերով: Հայ ազնուականը կ'ատէր բահը, եւ նախամեծար կը համարէր իւր պատառաքաղն ու տաշտը: Իսկ մնացած ժամանակը կ'անցընէր, ըստ գեղեցիկ նմանութեան Եղիշէի, «զօրէն էրէոց շրջելով ի մէջ ծաղկաբեր լերանց» (անդ), եւ յաւէտ իսկական երէոց ետեւէն վազելով, որուն ճոխ յիշա-